ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Անուշ Լավրենտի Թումանյանի «Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի տնտեսամաթեմատիկական ցուցանիշների գնահատումը (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Այսօր առողջապահական համակարգում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք առնչվում են համակարգի ֆինանսական անկայունությանը, բնակչության ծերացման մակարդակին, հիվանդացության բարձր մակարդակին, բուժծառայությունների բարձր գներին, ոչ արդյունավետ կառավարմանը, ընդամենը առողջապահական ծախսերի կառուցվածքում գրպանից կատարվող ծախսերի մեծ մասնաբաժնին, բժիշկների ցածր աշխատավարձին: Նշված հիմնախնդիրների առկայությամբ էլ պայմանավորված անհրաժեշտ են մի շարք բարեփոխումներ:

Հաշվի առնելով համաշխարհային փորձի ուսումնաիրությունները, զուգահեռներ անցկացնելով հետխորհրդային երկրների առողջապահական, ապահովագրական համակարգերի հիմնական ցուցանիշների հետ, ատենախոսությունում հիմնավորվում է պարտադիր բժշկական ապահովագրության ներդրումը, դրա արդյունավետ ուղիների մշակումն ու առաջադրումը:

Դեռևս 1990-ական թվականներից ՀՀ-ում անընդհատ քննարկվում է պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման հարցը, սակայն այդպես էլ վերջնականապես դրան ընթացք չի տրվել: Սակայն այսօր դրա նախագիծը նախնական քննարկման փուլում է և նախատեսվում է առաջիկա տարիների ընթացքում կյանքի կոչել: Այն բավականին բարդ գործընթաց է, որի ներդրումը պահանջում է տնտեսության մի շարք ոլորտների երկարատև, խորը և բազմակողմանի ուսումնասիրություններ և

վերլուծություններ, որոնց արդյունքում հնարավոր կլինի հիմնավորել, մշակել և ներդնել այն հանրապետությունում: Այս ամենով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակն է ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման հիմնախնդիրների բացահայտումը, արդյունավետ լուծումների առաջադրումը, որոնք իրականացնելու համար ատենախոսի կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Բժշկական ապահովագրության վերաբերյալ տարբեր մտածողների կողմից տրված սահմանումների ամբողջականացումը և հիմնական բաղկացուցիչների ներկայացումը
- Ուսումնասիրել ՀՀ առողջապահական համակարգի ցուցանիշները, առկա հիմնախնդիրներն ու համակարգի և սոցիալ-տնտեսական ցուցանիշների փոխկապվածությունները
- Ուսումնասիրել ՀՀ առողջության ապահովագրության համակարգն ու գնահատել դրա դերը առողջապահական համակարգի ֆինանսավորման համակարգում
- Պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման միջազգային փորձի ուսումնասիրությունն ու դրա ներդրման հիմնավորումը
- Գործոնային և կլաստերային վերլուծությունների միջոցով գնահատել ՀՀ առողջապահական համակարգի արդյունավետությունը և դիրքը նախկին խորհրդային երկրների շարքում
- Գնահատել ներդրվող պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի սակագինը ակտուարական հաշվարկների միջոցով
- ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման ապահովագրավճարի կանխատեսումը Մոնտե-Կառլոյի մեթոդով

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 173 էջի վրա: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և 10 հավելվածներից:

«Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը, ատենախոսության արդյունքների հրապարակումները, ատենախոսության ծավալը և կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ *«ՀՀ-ում բժշկական ապահովագրական համակարգի խնդիրներն ու զարգացման հեռանկարները»* գլխում, հեղինակը նախ ուսումնասիրել է բժշկական ապահովագրություն հասկացության էությունը, բաղկացուցիչները, տեսակները, տարբեր մտածողների կողմից տրված սահմանումներն և տվել ընդհանրական սահմանում, որում ներկայացվում է բժշկական ապահովագրության սոցիալ-տնտեսական նշանակությունները: Ներկայացվել է պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման միջազգային փորձը, կատարվել է ՀՀ առողջության ապահովագրական համակարգի ցուցանիշների վերլուծություն ու հիմնավորվել ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության ներդրումը:

Ատենախոսության երկրորդ՝ *«ՀՀ առողջապահական համակարգում պարտադիր բժշկական ապահովագրության ֆինանսատնտեսական գնահատականը եվ ներդրման արդյունավետության գործոնային եվ կլաստերային վերլուծությունները»* գլուխը, նվիրված է ՀՀ առողջապահական համակարգի գործունեության ցուցանիշների, ֆինանսավորման աղբյուրների, առողջության ապահովագրության ֆինանսավորման մոդելների ուսումնասիրությանը: Հեղինակը այս գլխում փորձել է գնահատել ՀՀ առողջապահական համակարգի արդյունավետությունը գնահատելու համար կիրառել է

գործոնային վերլուծության ապարատը, իսկ կլաստերային վերլուծությամբ տեղորոշել է Հայաստանի առողջապահական համակարգի դիրքը հետխորհրդային երկրների շարքում:

Ատենախոսության երրորդ՝ *«ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման տնտեսամաթեմատիկական գնահատման լուծումները»* գլխում, հեղինակը անդրադարձել է ՀՀ-ում ներդրվող պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ցուցանիշների մոդելավորման հիմնախնդիրներին և ակտուարական հաշվարկների և մաթեմատիկական մոդելների լուծման օրինակով գնահատել է ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման ցուցանիշները՝ ապահովագրական սակագինը և ապահովագրավճարի չափը:

Ատենախոսությունը եզրափակվել է եզրակացություններով, որտեղ ամփոփ ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները, ստացված եզրահանգումները և հեղինակի առաջարկները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքներն ու նորույթներն են.

- Ուսումնասիրելով ՀՀ առողջության ապահովագրության ոլորտի զարգացման ցուցանիշները գնահատվել է պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման տտեսական արդյունավետությունը
- Առողջապահական համակարգի արդյունավետությունը գնահատելու համար հեղինակի կողմից օգտագործվել է գործոնային վերլուծության ապարատը
- ՀՀ առողջապահական համակարգի դիրքը հետխորհրդային երկրների շարքում գնահատելու համար կիրառվել է կլաստերային վերլուծություն

- ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման պարագայում ապահովագրավճարի չափը գնահատվել է Մոնտե-Կառլոյի մեթոդով:

Ատենախոսությունը ունի ինչպես տեսական, այնպես էլ գիտագործնական նշանակություն: Տեսական առումով հետազոտության մի շարք դրույթներ և եզրահանգումներ կարող են օգտագործվել առողջապահական, առողջության ապահովագրության ոլորտի մասնագետների կողմից տեսական վերլուծություններում: Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ արդյունքները կարող են օգտագործվել պարտադիր բժշկական ապահովագրությանը առնչվող համապատասխան պետական վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից, ինչպես նաև պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման վերաբերյալ օրենք ընդունելիս:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ընդհանուր առմամբ՝ ատենախոսությունը ինքնուրույն և տրամաբանական կապերով շարադրված աշխատանք է, որն ունի տեսական և գիտագործնական նշանակություն: Այդուհանդերձ, աշխատանքը զերծ չէ նաև թերություններից, որոնցից կարելի է թերևս առանձնացնել հետևյալը.

1. Ատենախոսության առաջին գլխում ՀՀ առողջության ապահովագրական համակարգը նկարագրող ցուցանիշները (էջ 36-41) և երկրորդ գլխում առողջապահական համակարգը նկարագրող ցուցանիշները ներկայացնող տվյալները (էջ 56-71) 2019 թվականի համար արդեն հասանելի են, սակայն հեղինակը սահմանափակվել է 2006-2018թ.-ի տվյալներով:
2. Ատենախոսության երկրորդ գլխում նշված չէ, թե ո՞ր թվականի տվյալներն են օգտագործվել հետխորհրդային երկրների առողջապահական համակարգերի գործոնային և կլաստերային վերլուծության մեջ (Հավելված 6):

3. Կլաստերային և գործոնային վերլուծություններում բավարար կերպով հիմնավորված չէ երկրների ընտրությունը:
4. Հեղինակը երրորդ գլխում գնահատել է պարտադիր բժշկական ապահովագրության ցուցանիշները՝ սակագինն ու ապահովագրավճարի չափը: Աշխատանքը էլ ավելի կշահեր, եթե ատենախոսը զուգահեռականներ անցկացներ կառավարության կողմից արդեն իսկ քննարկման նախնական փուլում գտնվող պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի հաշվարկված ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության և իր կողմից առաջարկվող մեթոդաբանության միջև:
5. Աշխատանքի երրորդ գլխում՝ Մոնտե-Կառլոյի մեթոդի սցենարային փոփոխականների կանխատեսման համար հեղինակը կիրառել է վեկտորային ավտոռեգրեսիոն մեթոդը (VAR), որը ավելորդ կերպով ծանրաբեռնում է ատենախոսությունը: Դրա փոխարեն հեղինակը կարող էր օգտագործել տարբեր համաշխարհային կազմակերպությունների կողմից արդեն իսկ կանխատեսված ցուցանիշներ:

Եզրակացություն

Նշված թերությունները չեն նսեմացնում հեղինակի կողմից կատարված հետազոտությունը և չեն կարող էական ազդեցություն ունենալ հետազոտության արդյունքների վրա: Անուշ Լավրենտի Թումանյանի ատենախոսությունը իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որտեղ դրվել և լուծվել են ՀՀ-ում այսօր արդիական նշանակություն ունեցող առողջապահական, ապահովագրական, սոցիալական կարևորություն ունեցող խնդիրներ:

Հեղինակի հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են գիտական 7 հոդվածներում: Սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և ներառում է հետազոտության հիմնական դրույթներն ու ստացված արդյունքները:

Առհասարակ Անուշ Լավրենտի Թումանյանի «Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի տնտեսամաթեմատիկական ցուցանիշների գնահատումը (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին և հեղինակն արժանի է Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Պարոն Վ.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝

Վանաձորի պետական համալսարանի
գիտքարտուղար **Ս.Բեժանյան**

Ն.գ.թ., դոցենտ

21.07.2020թ.